

գոսնել¹, փոխանակ միտ զնելու անոր քարոզին, փոխանակ միտ զնելու անոր մատենագրական փորձ հմտութեան, ուսկից մեծապէս կրնային օգտուիլ միշտ ամէն անոնք, որ կը զբաղին հայ լեզուի ուսմամբ:

Այս յօդուածէն տարի մը վերջը Տօբթ. Սեւեան կը հրատարակէր Յ. Գուրգէնի Պարտիզներն² եւ Արեւելի մէջ «Տաղեր» վերնագրով քանի մը նմոյշներ իւր երբեմն բանաստեղծութիւններէն, որոնցմէ մէկ երկու հատը կ'արժէ կարդալ հոս, Սեւեանի հագներգական կարողութեանը վրայ գաղափար մ'ունենալու համար:

1. Իւյ՜

«Եթէ կոհակ լինէի

Չորս հինգ օրէ, ծով անցնելով խոր, անհուն,
Գէպ ի ծովափն ուր կը կոխեն սոք սիրուն

Ո՛հ — փրօփրօրալով կուգայի:

Եթէ նուրբ հով լինէի,

Չորս հինգ ժամէ, գալով թեթեւ, զովագին,
Այն պտերէդ, այն մազերէդ թանկագին,

Ո՛հ — զբգուելով կանցնէի:

Թէ սիրելիդ լինէի,

Մի վայրկինէ, թեթեւ, արագ իբրեւ շանթ,
Ծով անցնելով, գաշտեր, սարեր, գահաւանդ,

Ո՛հ — սըրտիդ մէջ կիջնէի:»

2. Պարտիզներն:

«Օր մի երբ ահեղ, թանձրամած ամպեր
Հորիզոնի վրայ մի քող ահաբեր
Տարածելով սեւ եւ արձակ եւ լայն,
Շուրջ կը պատեն սպառնալիր համայն.
Եւ երբ կը դիտէր բնութեան՝ ծայրէ ծայր
Լուծիւն խոր, սարսափ ու դող ու խաւար,
Յանկարծ յեղակարծ՝ գահապէտ, թեթեւ
Գրծելով արագ ետեւէ ետեւ
Ձեկզակ շաւիղներ ահաւոր հրեղէն
Փայլակ պակուցիչ անցաւ ամպերէն:

«Ի՞նչ էր», ոմն անդէն ինձ կը հարցնէր,
Պատանեկութիւնն էր այն որ կանցնէր:»

Տր. Գ. Սեւեան:

Առանց որ եւ է գատաստանի ենթարկելու այս բանաստեղծութիւնները, որք շարագրուած են 1854—59, կ'ըսեմ, թէ՛ Տօբթ. Սեւեան, դեռ այսօր իսկ, թէեւ մօտ կենաց

երեկոցին, երիտասարդական աւիւնով կը շարունակէ թրթռացընել իւր քնարի լարերը, որոնց արդիւնքը հարկաւ օր մը լոյս պիտի տեսնեն ի պատիւ հայ բժշկական դասուն Կ. Պոլսոյ, եւ ի զարգացումն հայ գրականութեան:

1892ին Տօբթ. Սեւեան Պէյ ի դիմաց ծովային նախարարութեան կը մասնակցի բարձրագոյն դուռը գումարուած Առողջապահական կայս, խորհուրդին, ուր այնպիսի արդիւնաւոր գործունէութիւն կ'ունենայ, որ արժանի կ'ըլլայ կայսերական գնահատման եւ կը բարձրանայ լիվա-փաշայութեան (générale de brigade) աստիճանին, ինչպէս այն ատեն ծանուցին մարաքաղաքին թուրք եւ օտար թերթերը, եւ գովաբանութեամբ հրատարակեցին բոլոր հայ լրագիրները:

1894 Հոկտեմբերին, Սեւեան Փաշա, կ'արժանանայ Գ. կարգի Օսմանիէ պատուանշանին. 1896 Ապրիլ 20ին՝ Բ. կարգի Մեֆթիկէ պատուանշանին, իսկ 1897 Յունիս 12ին ալ կայսերական մասնաւոր հրամանաւ, կը կոչուի հանգստեան:

Ծովային զինուորական բաղմամբայ ծառայութիւններով չափազանց յոգնած, մանաւանդ իւր սիրելի կողակցին եւ ծաղկահասակ որդւոյն վաղահաս մահուամբը վշտահար, Տօբթ. Գարրիէլ Փաշա Սեւեան, շատ իրաւունք ունէր այս հանգստեան, զոր կը վայելէ այսօր, միութարութիւն եւ զբօսանք ունենալով իրեն իւր գրական եւ գիտական ուսումնասիրութիւններն ու բարեկիրթ զաւակները՝ որք Ազգին մէջ գրաւած են արդէն պատուաւոր դիրք:

Ալեւոր դարուս հետ, Սեւեան Փաշա պիտի աւարտէ իւր 78 տարին. եւ ներկայ Յունիս 20ին կը լրացնէ, ինչպէս գրեցի արդէն, իւր բժշկական վկայականին յիսներորդ տարին. կէս դար կը բոլորէ, կէս դար բեղմնաւոր եւ արդիւնաշատ, կէս դար . . ., պատկառելի հնութիւն, զոր յարգանքք այսօր ողջունելով, կը ցաւիմ շատ՝ որ Կ. Պոլսոյ հայ բժշկական մարմինը, տակաւին չունի սովորութիւն, յորելեանի հանդէսներով պատուելու՝ իւր տարեց անգամներուն երկարամեայ տքնութիւնները. յորելեանի ծաղիկներով պսակելու ձեր արուեստակցի մը կիսադարեան կնճիւնները:

Սեւեան Փաշա հազուագիւտ դէմք մըն է այսօր իւր ազգին մէջ. հազուագիւտ դէմք մը, որ՝ Սերվիլէնի, Սինապեանի, Տալուտեանի, Բաբունակ Պէյի, Ռուսինեանի, եւ ասոնց ժամանակակից ու գործակից Օտեանի, Աղաթոնի,

1 Հայրենիք Թիւ 267, 10 Հոկտ. 1892: Մասին Թիւ 3970 31 Հոկտ. 1892, էջ 242:
2 Պարիզ Ալեքսի Գրիգորեանի Գրքերն է վերջ Իւյ՜ ժ. Գրքերն 1893 Հատոր Բ. էջ 54—61 եւ 113—115: